

0120-10

# Ժ Ր Ա Գ Ի Ր

## ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ

1931—1932 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

(ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՐՔԱՆՏ)

ԳՐԱՆՆ Ի 50 ԿՈՊ.





372

15 MAY 2013

50 395

20687

0-89

НАПЕЧАТАНО  
 в гостипографии „Красный Восток“  
 АЗПОЛИГРАФА ВСНХ.  
 Баку, Карантинная, 84.  
 Главлит № 4724    Стат.-форм. А-5  
 Заказ № 10322.    Тираж 700.



7475-53

## 1. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

1. Շուտով նորեկները հավաքվելու են դպրոց: Պետք է հանդիպումը կազմակերպել այնպես, վեր նրանց դպրոց դալու առաջին ուրը շատ յերկար մնա նրանց հիշողության մեջ: Կատարենք նրանց համար հանդիսավոր հանդիպում — տոն:

Կազմենք այդ հանդիպումի պլանը և աշխատանքը մեր մեջ բաժանենք: Կրկնենք անցյալ տարվա յերգերից, բանաստեղծություններից, մեր սովորած նոր յերգերի ու բանաստեղծությունների հետ. վերհիշենք և անցկացնենք խաղերն ու զարդարենք դպրոցը:

2. Յերկրորդ խմբի աշխատանքը պիտի սկսել անցած ամրան աշտանքներն ստուգելով:— Խնչ ենք արել այս ամառ: Խնչպես են կատարված դպրոցի առաջադրությունները: Բրիգադները լավ են աշխատել կոլխոզում, դաշտում, բանջարանոցում, այգում, բամբակի քաղհանում և այլն: Կատարված են արդյոք սոցմրցման պայմանագրերը: Անցկացնենք ստուգում բրիգադի աշխատանքների ու ամբողջ խմբով նայենք ծաղկանոցը, բանջարանոցը և այլն: Հարց ու փորձ անենք մանուկների բրիգադին կցված հասակավորներից և պատանիներից, թե ինչպես և անցել աշխատանքը:

3. Բացի գյուղատնտեսական աշխատանքից՝ բրիգադներն ամրանը պիտի դիտեն նաև բույսերի և ընտանի անասունների կյանքը. բնության յերևույթները և կոլխոզի կյանքը: Ստուգեցեք նաև այդ առաջադրությունները: Ամբողջ խմբով նայեցեք ամարային որացույցները կամ ավելի լավ կլինի, յեթե կազմակերպեք որացույցների, ամարային նկարների, կոլեկցիաների և այլն ցուցահանդես և հրավորեցեք մեծերին այնտեղ: Կատարեցեք մի փոքր հաղորդում որացույցների և դիտողությունների վերաբերյալ: «Խնչպես ամրապնդվեց մեր կոլխոզն ամրանը (քանի անհատական տնտեսություն և մտել այնտեղ, քանի՞ և ինչ տեսակի մեքենաներ և ձեռք բերել կոլխոզը, վճրբանով և ավելացել ցանքսն ու հոտը)»: «Խնչպես ենք ոգնում կոլխոզներին աշխատանքի մեջ», «մեր դիտողությունները՝ բնության, բույսերի և անասունների վրա», «մեր խաղերն ու ժամանցները», «Խնչ գրքեր ենք կարդացել ամառը»:

4. Այդ բոլորի մասին գրեցեք կարճ թղթակցության ձևով (3—4 ֆրագ) և այդ նյութերով լույս ընծայեցեք մի պատի թերթ՝ «Մեր ամարային կոլխոզային կյանքը» անունով: Ստուգենք նույնպես, թե ինչ



չափով սլահպանվել են մեր գրելու ունակութիւնները: Բացի գրից պիտի ստուգել նաև կարգալն ու հաշվելը: Մոռացածներս պետք է կըրկընենք, վոր ամբապնդվի:

5. Դպրոցի աշխատանքները լավ տանելու համար անհրաժեշտ է, վոր բոլոր սովորողներն էլ հենց սկզբից կանոնավոր և ճշտութեամբ հաճախեն: Մենք այդ կիրականացնենք և հենց այդ նպատակով էլ կըստուգենք իմանալու համար, թե բոլոր յերեխաներին արդյոք ուղարկում են դպրոց. յետ չեն պահում արդյոք տան գործի, հագուստի կամ վտանամանի պատճառով: Այժիկներին չեն անգնում արդյոք, կուլակներն ու տերտերները ազիտացիա չեն մղում արդյոք դպրոցի դեմ: Պիտի կազմակերպութեամբ, գյուղխորհրդի և կոլխոզի միջոցով միջոցներ ձեռք առնենք՝ լիովին կանոնավոր հաճախումն ապահովելու համար: Անցյալ տարվա նման ամեն որ հաշվի առնենք բոլոր բացակայողներին, նշանակելով պատճառը, վորպեսզի անմիջապես պետք չեղած միջոցները ձեռք առնենք: Այդ աշխատանքը պիտի կատարեն որապահները: Պետք է կազմել որապահիկների ցուցակը և վորոշել նըրանց պարտականութիւնները:

6. Իսկ ի՞նչ կոմիսիաներ պիտի աշխատեն մեզ մոտ: Ժամանակն է արդեն, վոր նրանք էլ գործի անցնեն.— սամիսարական կոմիսիան պիտի դրադվի մաքրութեան և կարգ ու կանոնի խնդիրներով: Տնտեսական կոմիսիան ստուգում է դասարանի ունեցվածքի վիճակը և կազմում ցուցակ, ի՞նչ է պակաս, ի՞նչ բան նոր պիտի գնել, իսկ ի՞նչը կարող են իրանք սարքել, շակել աշխատանքի անկյունում: Ի՞նչ պիտույքներ, նյութեր, գործիքներ կան և ի՞նչ պիտի ձեռք բերել: Գրադարանային կոմիսիան պիտի ստուգի գրքերի պահեստը, գրքերը կարգի բերի և սկի գրքեր տալը: Աշակերտական ընդհանուր ժողովը ու պիտի կազմըն իրենց աշխատանքներն սկսում են առաջին իսկ օրից:

7. Մենք ի՞նչ պիտի անենք այս տարի. ի՞նչ ենք սովորելու: Կազմենք մեր կոլխոզ աշխատանքի ցուցակը, վորն սկսել ենք անցյալ տարվանից և պիտի շարունակենք յետագայում էլ մեր ցուցակը համաձայնեցնել դպրոցի աշխուժի հետ. նա է դիկավարում ամբողջ դըպրոցի հասարակական աշխատանքները, համաձայնեցնում է գյուղխորհրդի և կոլխոզի հետ ու բաժանում այն խմբերի մեջ: Նշանակենք թե ի՞նչպես է աշխատում աշխատանքի անկյունը: Կազմենք մի հարցաբան այն մասին, թե ի՞նչ ենք ուզում իմանալ կոլխոզիկների կյանքի մասին, քաղաքների և մյուս յերկրների բանվորների կյանքի մասին, կապիտալիստների դեմ բանվորների պայքարի մասին, կոմունիստական կուսակցութեան և խորհրդային իշխանութեան աշխատանքի մասին, այն մասին, թե ուրիշ ազգութիւնների յերեխաներն ի՞նչպես են ապրում, ի՞նչպես պաշտպանել անողջութիւնը: Ի՞նչ կազմութիւն

ունին և ի՞նչպես են ապրում բույսերը, թռչուններն ու գաղանները և այլն: Մեր պլանը գրենք մեր տետրերում, իսկ մի բրիգադի հանձնարարենք գեղեցիկ տպագրական առերով գրելը, վոր դասարանում մի աչքի ընկնող տեղից կախենք:

Նրանով մենք պետք է հետևենք և ստուգենք թե ի՞նչպես է գընում մեր աշխատանքը, պլանը կատարվում է թե վոչ: Մի ուրիշ բրիգադի կ'անձնարարենք մի արկղ պատրաստել և դնել աշխատանքի անկյունում, վորպեսզի մեզնից ամեն մեկն այնտեղ գցի իր գրավոր առաջարկութիւնները:

Ի՞նչ հետաքրքրական աշխատանքներ կարող է վերցնել իր վրա խումբը, ի՞նչ գրքուկներ և գործիքներ պիտի ձեռք բերել, ի՞նչպես անել, վոր ավելի լավ դնել կոմիսիայի աշխատանքները և այլն. ահա այս և նման հարցերի վերաբերմամբ պիտի լինեն գրավոր առաջարկութիւնները: Հաջող և հետաքրքիր առաջարկութեւններն աշխուժ կգետեղի պատի թերթի մեջ և կգնի խմբի կամ դպրոցի ժողովը քննութեամբ:

Այդպես մեր ամբողջ կոլխոզի վրա միշտ միասին պիտի աշխատի լավացնելու համար մի կյանքը, բարձրացնելու համար մեր աշխատանքներն ու ուսումն իրենց վորակով, պիտի կազմի հետ, վորն հանդիսանում է այդ բանում առաջին հարվածայինը:

8. Ո՞վ դեռ դըւրսն է մնացել պիտի կազմից. մտքը պատանի լինի յանների շարքերը: Խնդրենք ավագ պիտիներին, վոր մեզ գեկուցեն պիտիներների որենքների, սովորութիւնների, պարտականութիւնների և աշխատանքների մասին: Կարգանք այն մասին, թե պիտիներները ի՞նչպես են աշխատում կոլխոզներում, գյուղերում և քաղաքներում: Խնդրենք ավագ պիտիներներից, վոր մեզ համար կարգանք, թե ի՞նչպես են ապրում պիտիներները արտասահմանում և ի՞նչպես են պայքարում կապիտալիզմի դեմ, այդ մասին այժմ բոլոր լրագրներում էլ գրում են, վորովհետև մտենում է Միջազգային Պատանիկութեան Որը: Դա կոմսոմոլի որն է, ամբողջ աշխարհի բանվոր և գյուղացի պատանիկութեան որն է: Մեզ մոտ ԽՍՀՄ-ում պատանիներն ոգնում են աշխատավոր մեծերին՝ պայքարելու նոր կյանքի, սոցիալիզմի համար՝ բանվորների և աշխատավոր գյուղացիութեան բոլոր թշնամիների դեմ: Ուրիշ յերկրներում բանվոր պատանիկութիւնն ու փոքրերն ոգնում են իրանց հայրերին՝ շահագործողների դեմ պայքարելու գործում: Միջազգային Պատանիկութեան Որը այն որն է, յերբ ամբողջ աշխարհի բանվոր ու աշխատավոր պատանիկութիւնը միաժամանակ ստուգում են իրանց հեղափոխական աշխատանքները:

Յերեխաներ, դուք էլ պիտի լինեք կոմունիստական կուսակցութեան և կոմսոմոլի ակտիվ ոգնականները: Մտեք պիտիներների և հոկտեմբերիկների շարքերը:



## II. ՊԵՏՔ Ե ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ

1. Կոլխոզում բերքն են հավաքում (բրինձ, բամբակ, պտուղներ և այլն): Դա գյուղատնտեսութեան տաք ժամանակն է: Աշխատանքի նկարներ՝ դաշտում, այգում, բանջարանոցում:

Իսկ ի՞նչ մասնակցութիւն պիտի ունենանք մենք ինքներս այդ աշխատանքում: Խմբի ժողովում նշանակենք բամբակի, բանջարեղենի և պտուղների բերքի հավաքմանը մասնակցելու մեր աշխատանքները: Աշխատելու համար բաժանվենք բրիգադներ: Կազմենք այգու և բանջարանոցի հատակագիծը առանձին նշաններով և նշանակենք այնտեղ մեր աշխատանքի կետերը (պլանը պիտի լինի սխտեմատիկ, այգու և բանջարանոցի միայն ընդհանուր ուղղագիծը, առանց մասշտաբի, նրանց հիմնական մասերով, այսինքն՝ մի հատակագիծ, վոր տալիս է ուղղութիւնների և մոտավոր հեռավորութիւնների պատկերացումը):

2. Իրոք բրիգադներին պիտի տալ առաջադրութիւններ. իմանալ՝ ի՞նչպես է բերքը այս տարի. յեղանակն ի՞նչպես է յեղել ամբանը և ի՞նչպես է ազդել բերքի վրա. ի՞նչպես է բերքը կոլխոզում և միանձնյա տնտեսութիւններում. ի՞նչպես են կազմակերպված կոլխոզների կներն աշխատանքի համար (բրիգադները): Ուղքեր են հարվածաշինները մեր կոլխոզում. նրանց աշխատանքի արդյունքները, ի՞նչպես է բաժանվում բերքը կոլխոզում (սերմի ընդհանուր ֆոնդն ու անասունների կերը, կոլխոզի կներին պարենը. բերքից մնացած ամբողջ մասը բանվ ըներին և Կարմիր Բանակին՝ համաձայն կոնտրակտացիայի. գրա փոխարեն քաղաքից մեքենաներ և սպորանք): Համեմատեցեք կոլխոզի կներին և միանձնյա տնտեսութիւնների յեկամուտը: Աշնանացանի կամպանիա:

3. Մեքենայի և ձեռքի աշխատանքը և նրանց արտադրողականութեան ահագին տարբերութիւնը.— որական վերջան տարածութիւն կարելի է փոփոխել թիով, հերկել ձիով և տրակտորային գութանով: Մեքենան պահանջում է կոլեկտիվ աշխատանք: Վերտիկից են կոլխոզի մեքենաները.— նրանց պատրաստել են բանվորները՝ ֆարրիկաներում և գործարաններում:

Առանց մեքենայի չկա բարձր բերք: Այդ նշանակում է գյուղատնտեսութեան զարգացումը կախված է արդունադործութեան զարգացումից. գրա համար՝ խորհուրդների իշխանութիւնը կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ առաջի հերթին պատրաստում է մեքենաներ պատրաստող գործարաններ, վորպեսզի այլևս կապիտալիստներից կախում չունենանք:

4. Զբաղորդներն ու միջակներն առջ ունեի՞ն արդյոք մեքենաներ: Կուլակներն ի՞նչպես իրն ստիպում իրենց մեքենաների միջոցով չբաղորդներին աշխատել: Այժմ մեքենաներն պատկանում են չբաղորդներին և միջակներին իրենց, վորոնք միացել են կոլխոզում, վորպեսզի միասին աշխատեն: Ինչո՞ւ կուլակներն ու կուլակացողները չեն ուզում չբաղորդին ու միջակին աղատել իրենց կախումից:

5. Գյուղական տնտեսութեան մեջ բերքատուութեանն արագ կերպով կարելի չէ բարձրացնել միայն մեքենաների ոգնութեամբ, այսինքն ֆարրիկաների և գործարանների բանվորութեան միջոցով: Ահա թե ինչու համար կոլխոզի կներն ու միանձնյա տնտեսութիւնները պիտի հոգան բանվորներին կենսամթերքներով, իսկ գործարանները հում նյութով ապահովելու մասին: Անբաժնոտ է՝ ժամանակին և լիովին կատարել հացի, մսի, բանջարեղենի, կաթի, վուշի, բամբակի, բրդի և այլն կոնտրակտացիան: Կուլակները պայքարում են կոնտրակտացիայի դեմ, մթերման դեմ: Յերեկաներ, կուլակների ազիտացիային վորպես պատասխան, ծավալեցեք ձեր ազիտացիան «կարմիր սալաշարքերի» ոգտին:

6. Ինքը հավաքելու հետ միաժամանակ, հացահատիկային շըրջաններում պատրաստվում են աշնանացանին և ցանում: Իմանանք, թե կոլխոզն ի՞նչպես պատրաստվեց ցանքսին (սերմը, մեքենաները, ձի, մարդ): Ինչո՞ւ համար բույսերի մի մասը (վորոնք) ցանում են աշնանը, մյուս մասը՝ զարնանը: Ի՞նչպես պիտի լինի հողը՝ լավ բերք ստանալու համար: Ի՞նչ է նշանակում ցելը, հերկը. նա ի՞նչի համար է պետք: Ցանքսի ընթացքում մեր կոլխոզն ո՞ւմ հետ է մտել սոցմրցման մեջ և ինչպես է դնում այդ մրցումը: Կուլակներն ու տերտերներն ինչո՞ւ համար և ի՞նչպես են պայքարում ցանքսն արագ թափով անցկացնելու դեմ: Գյուղխորհուրդն ի՞նչպես է ղեկավարում ցանքսը:

7. Միասին գնանք ջրաղաց, բամբակաղտիչ կամ կոնսերվի գործարանը և քսկուրսիայով. տեսնենք ինչպես են մշակվում գյուղական տնտեսութեան արդյունքները: Ի՞նչպես է պատրաստված ալյուրաղացը, բրնձաղացը: Ի՞նչ ույժ է շարժման մեջ դնում աղացաքարերն ու մեքենաները. նույնն (շարժույժ) ինչպես է հաղորդվում մի մեքենայից մյուսին:

Հիմա ջրաղացը, գործարանը պատկանում են խորհրդին, կոլխոզին կամ կոոպերացիային. իսկ ունեին պատկանում առաջ:

Կուլակ աղացատերն ի՞նչպես եր տողում չբաղորդի և միջակի աշխատանքի հաշվին:

8. Աշնանային բոլոր աշխատանքները վերջանալուց առաջ աշխատավորները մեր յերկրի բոլոր կողմերում սարքում են «Ինքքի և կոլեկտիվացման» տուն, փոխարեն մուլաների, տերտերների և հա-



րուստաների տոններէ, յերբ նրանք հղիանում են մտով ու քաղցրեղենով: Աշխատավորները կազմակերպում են իրենց կողլեկտիվ աշխատանքի տոնը: Այդ որը նրանք ստուգում են իրանց աշխատանքը, սարքում են ցուցահանդես, գեկուցումներ են անում կոլխոզի աշխատանքի ու նվաճումների մասին. ստուգում են, թե ի՞նչպես և ի՞նչ չափով են կատարվել սոցմրցման պայմանագրերը, քանի՞ միանձնյա տնտեսութուն է մտել կոլխոզ. ի՞նչ չափով է բարձրացված բերքատուութունը: Այդ որը կազմակերպում են մեքենաների հանդիսավոր յերթ, ներկայացում, խմբական յերգեր, կինո: Բանավորներն այդ որը քաղաքից գալիս են մասնակցելու տոնին, վորպեսզի պատմեն, թե իրանք ի՞նչպես են աշխատում Փարբիկայում ու գործարանում և իմանան, միաժամանակ, թե ի՞նչպես է ընթանում աշխատանքը գյուղի կոլխոզում: Այդ որվանն են հարմարեցվում միանձնյաների հանդիսավոր ընդունելութունը (կոլխոզ), բամբակի ու հացի կարմիր սայլաշարքերը՝ այդ արդյունքները պետութայն հանձնելու համար: Մենք ել մասնակցենք այդ տոնին.— պատրաստենք ցուցահանդես, լույս ընծայենք պատի թերթ, սովորենք յերգեր, բանաստեղծութուններ, մի փոքրիկ պիես և այլն:

9. Իերքի տոնին և ցուցահանդիսին մասնակցեցին վոչ միայն կոլխոզը, մեր գյուղն ու մեր դպրոցը, այլ և քաղաքից յեկած բանավորները: Յուցահանդիսի միջոցով և միտինգում յերեխաները ծանոթացան հարևան կոլխոզների, գյուղերի և դպրոցների նվաճումների հետ: Այդ կոլխոզներից և գյուղերից մի քանիսում յերեխաներն յեղել են, մյուսներում վոչ: Քանի դեռ յեղանակները լավ են, պետք է ոգտագործել ժամանակը՝ յերեխաների պատկերացումը մերձակա վայրերի վերաբերմամբ ճշտելու նպատակով: Ամենից լավն է՝ այդ անել այսպես. կազմակերպել դրոսանք-եքսկուրսիա դեպի մեր մոտակա կոլխոզը, վորտեղ յերեխաների մեծամասնութունը չեն յեղել. ճանապարհին, մի բարձրութայն վրայից դիտել շրջակա տեղերը. կամ կարելի է դրոսանք եքսկուրսիան կատարել ուղղակի մի վորև է բարձրութուն և այնտեղից դիտել շրջապատը: Այնտեղից արևի դեքով վորոշել յերկրի կողմերը և նշանակել, թե վոր կոլխոզները գտնվում են հյուսիսում, հարավում, արևելքում, և արևմուտքում: Դիտել, թե վոր կողմն է հոսում գետակը, վորտեղից է անցնում խճուղին կամ յերկաթուղին, վորտեղ են գտնվում անտառները, դաշտերը, ճահիճները, ձորերը, լեռները, բլուրները, հարթավայրերը, գետակների յերակետերը, ուղղութունը և խառնարանները:

10. Եքսկուրսիայից հետո յերեխաները պիտի գծեն բարձրութունից դիտած և տեսած շրջավայրի սխեմատիկ հատակագիծը, առանց մասշտաբի և նրա վրա նշանակեն տեսած բոլոր կետերը՝ պայմանա-

կան նշաններով: Նշանակեն այն կետերը, վորտեղ լողանում են, վորտեղից պտուղներ են հավաքում և այլն:

11. Շրջապատն ուսումնասիրելու յետագա աշխատանքները յերեխաներին պիտի ցույց տան թե մերձակա վայրերում ի՞նչ բնական հարստութայններ կան և մարդիկ ի՞նչպես են ոգտագործում նրանց կողլեկտիվորեն. ի՞նչպես են ոգտագործում յերկրագնդի միջուկի դաշտերը, անտառները, ջրերը, մարգագետինները, արոտատեղիները, վարելահողերը: Ելի ի՞նչ բնական հարստութայններ մնացել են չոգտագործված: Հենց այս կետում պետք է յերեխաների ուշադրութունն հրավիրել փոփոխութայնների վրա, վորոնք տեղի եին ունենում գյուղի շրջապատում՝ բնութայն քայքայող ուժերի և մարդու գործունեյութայն ազդեցութայն տակ (ջրի իր ափերը լիզելը, նոր ձորեր բացվելը), նոր անտառներ (արհեստական) յերևան գալը, նոր ճահիճներ գոյանալը և այլն. վորոգում, չորացում, պայքար ջրախոռոչների դեմ և այլն:

12. Առաջ ում եին պատկանում բնական բոլոր հարստութայնները (վարելահող, անտառ, մարգագետին և այլն. կալվածատիրական հողեր): Կուլակներն ի՞նչքան հող ունեյին: Պորհրդային իշխանութունը հողի սեփականութայնը վերացրեց. խլեց հողերը շահագործողների ձեռքից և տվավ ոգտագործելու կոլխոզներին, չքավորներին ու միջակներին:

### III. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Յերեխաներն ժողեն ծանոթ են կոլխոզնիկների և միանձնյա տնտեսութայնների աշխատանքներին. համեմատեցին ձեռքի և մեքենայի աշխատանքի արտադրականութայնը. ստացան վառ պատկերներ աշխատանքը շահագործումից ադատելու պայքարի մասին: Այժմ պետք է նրանց ուշադրութայնը դարձնել հարցի մի ուրիշ կողմի վրա.— պետք է ցուցաբերել վոր միայն առողջ մարդը կարող է արդյունավետ աշխատել. պետք է սովորել աշխատանքը, հանգիստն ու քունը ճիշտ կազմակերպել, սովրել առողջութայն մասին մտածելուն և նրա մասին հոգալուն: Բաց յեթե յուրաքանչյուրը պիտի մտածի միայն իր առողջութայն մասին, այն ժամանակ շատ քիչ ոգուտ կատացվի. պետք է վոր ամբողջ կոլխոզը, ամբողջ գյուղը միասին և միահամուռ պայքարեն առողջութայն և նրա պահպանութայն համար. բաց ի՞նչպես կազմակերպել այդ:

2. Առժողկոմատը ժողովրդի լայն մասսաների համար մշակել է սանիտարական միջիմուռը: Յերեխաներին պիտի ծանոթացնել այդ միջիմուռի հետ: Սանմիջիմուռի պահանջներն յերեխաներին գործնական ունակութայններ տալու համար, անհրաժեշտ է աշխատանքը նը-



բանց հետ դնել այնպես, վոր նրանց համար պարզվեն սանմինիմուսի մեջ մտնող առանձին միջոցառումները: Իսկ դրա համար անհրաժեշտ է վոր ամենից առաջ չերեխաներն հասկացողութիւնն ունենան մարդու մարմնի ընդհանուր կազմութեան և նրա առանձին գործարանների աշխատանքի մասին: Ամենապարզ և մատչելի ձևով չերեխաներին պիտի ծանոթացնել վոսկորներին, մկաններին, մորթի դրութիւններին և դերերին, շնչառութեան, մարսողութեան պրոցեսներին հետ: Այստեղից ել հետևողական, բնական կապակցութեամբ անցնել այն հարցին, թե առողջութեան համար վորքան անհրաժեշտ է մաքուր ոդը, լավ կերակրելը, մարմնի և բնակարանի մաքրութիւնը: Հենց այստեղ ել պիտի տալ մարդու հիվանդութիւններին մասին հիմնական մի շարք հասկացողութիւններ.— վարակի և նրանից զուշանալու միջոցներին, հիվանդութիւնները բժշկելու ձևերի մասին (դեղ, բժիշկ, հիվանդանոց), հեքիմութեան և մոլլաների ու տերտերների բժշկութիւններին դեմ պայքարելու անհրաժեշտութեան մասին, վորոնք ժողովրդին միայն խաբում են և ուրիշ վոչինչ:

3. Յերեխաները պետք է ստուգեն, թե ի՞նչպես է կատարվում սանմինիմուսի իրենց գլուղում: Իրենց գլուղի սանիտարական դրութեանը ծանոթանալու և նրան քննադատելու արդյունքներին վրա պիտի կազմվի և խմբի գործնական աշխատանքներին և անելիքներին պըլանը՝ առողջութեան համար պայքարելու գործում: Այդ աշխատանքն չերեխաներն պիտի կատարեն դյուղիօրհրդի ղեկավարութեան տակ: Իսկ ի՞նչպիսի գործնական կետեր կարող են մտնել և խմբի աշխատանքի պլանի մեջ:

Ահա նրանց որինակելի մի ցուցակ.

1. Կատարել սանիտարական ստուգատես հասարակական հիմնարկներում և հսկել սանմինիմուսի կանոնների կատարմանը:
2. Անցկացնել «մաքրութեան դեկադ» ինչպես հասարակական նույնպես և մասնավոր ոգտադործման համար սպասարկող բոլոր հիմնարկներում հիմնական մաքրագործում կատարելու համար:
3. Պայքարել բնակարանային պարագիտների դեմ (փայտօջիլ, տարական):
4. Հսկել ընկերների առողջութեան վրա և հայտնել հիվանդանոցին բոլոր վարակիչ հիվանդութիւններին դեպքերում:
5. Կազմակերպել շարժական դեղատուն:
6. Տարածել առողջութեան պահպանութեան և վարակիչ հիվանդութիւններին վերաբերյալ գրքույկներ:
7. Ազիտացիա մղել ծխելու դեմ:
8. Պրոպագանդա անել հասարակական բաղնիք, լվացարան ճաշարան ունենալու համար:

9. Կազմակերպել դպրոցում տաք նախաճաշ:

10. Թե դպրոցում և թե պիտներ կազմի մեջ Ֆիզիկուլտուրան լավ հիմքերի վրա դնելու համար պայքար մղել: Պետք է Ֆիզիկուլտուրան դարձնել ամենորջա աշխատանքի մի պարտավորեցուցիչ մասը (լիցք, խաղեր և այլն):

4. Այդ հասարակական գործնական աշխատանքներին շուրջն ել ծավալվում է յետագա կրթական աշխատանքը: Այդպես, որինակ՝ փայտօջիլի, տարականի, լուխ և վոջիլի դեմ մղվող պայքարի ընթացքում չերեխաները կծանոթանան նրանց դեմ մղվող պայքարի ձևերին հետ (գրքույկների միջոցով) և այլն: Հասարակական բաղնիսի, լվացարանի և ճաշարանի համար պրոպագանդան պահանջում է նախնական պատրաստութիւն, վոր պարզաբանում է նրանց նշանակութիւնը առողջութեան պահպանութեան և կնոջ տնային ծանր աշխատանքից ազատագրելու գործի համար: Այստեղ ել պիտի տալ այդ հարցում չերեխաների մտահորիզոնն ընդլայնող մատերիալ.— ի՞նչպես է կազմակերպված սանիտարական աշխատանքը քաղաքում, — քաղաքին բարեշինուութիւնը, բաղնիք, լվացարաններ, սանիտարական հսկողութիւն, սանկոմիտիաների աշխատանքը, պայքար ակոհոլիզմի դեմ: Պետք է պարզ ձևով չերեխաներին համար պարզաբանել թե խորհրդային իշխանութիւնն ի՞նչպես է հոգում բանվորների և կոլխոզնիկների առողջութեան և աշխատանքի պահպանութեան համար, նույնպես և միանձնյա տնտեսութիւններին: Ի՞նչ բան է Առժողկոմատը: Հիվանդանոցի, բուժարանի և բժշկական կայանի աշխատանքները: Հասակավորների և փոքրերի աշխատանքի պահպանութեան կանոնները:

Իսկ ի՞նչ պայմաններում եին աշխատում բանվորներն ու աշխատավոր պտուղացիութիւնը՝ հեղափոխութիւնից առաջ, ցարի և կապիտալիստների որով: Խորհրդային իշխանութիւնը, կոլլեկտիվիզացիան ճանապարհ են դեպի նոր առողջ կյանքը:

Կրոնը և պայքար առողջութեան համար.— առողջութեան պահպանութեան, գիտութեան և բժշկութեան փոխարեն կրոնն առաջարկում է հույսը դնել «աստու» վրա, բժշկել աղոթքներով, պաշտպանում է հեքիմութեան ու կախարչութեան համար տաժվող հավատքը: Նա աշխատավորութեան նյութական դրութիւնը լավացնելու համար մղվող պայքարին հակադրում է «ծումը» և այլն: Կրոնը աշխատավորութեան առողջութեան թշնամին է: Այստեղ չերեխաներին պիտի բացատրել ծոմապահութեան փրանները և թե՛ ինչ՞ով հոգևորականութիւնը նրան պաշտպանում է:

5. Յերեխաները պետք է սովորեն դժբաղդ դեպքերում առաջին ոգնութիւնն հասցնելը, զանազան վիրահատանք կատարելը, արյունահոսութիւնը կանգնեցնելը, ոգնել ջարդվածների ու ձմրումների դեպ-



քում, ոգնել ուշաթափության, արեահարության դեպքերում, ոճի խայթի դեպքում: Դպրոցում պարտադիր կերպով պիտի ունենալ թեթև դեղատուն և բոլոր յերեխաները պիտի իմանան նրանից ոգավելու յեղանակը:

#### IV. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1914 թվին սկսվեց համաշխարհային պատերազմը, վորը տևեց 4 տարի: Այդ պատերազմի ժամանակ սպանվեցին բազմաթիվ մարդիկ (10 միլիոն ժողովուրդ) և ավելի շատ հաշմանդամացան (15 միլիոն վիրավորվածներ): Բոլոր յերկրներում, վոր մասնակցեցին պատերազմին, տնտեսությունը ընկավ:

Ո՛ւմ եր պետք այս պատերազմը. բանվորներին և աշխատավոր գյուղացիությունը.—վոչ. պատերազմը նրանց համար բերեց միայն չքավորություն, ավերածություն և անթիվ դժբախտություններ. պատերազմը պետք եր և ոգտակար կապիտալիստներին և ֆարքիկա-գործարանատերերին: Կապիտալիստները յերբեք բավական չեն մնում այն յեկամտով, վորը նրանք քամում են բանվորից. նրանք ձգտում են միշտ ավելի և ավելի քամել բանվորներին: Այդ պատճառով ել կա պիտալիստներին մեջ այդ շահույթը բաժանելիս սկսում ե ընդհարում: Վարտեղ վոր իշխանությունը կապիտալիստների ձեռքն ե, այնտեղ պատերազմը անխուսափելի ե:

Բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը ապստամբվեցին և առաջ ցարին քշեցին (դա 1917 թվի փետրվարին եր), հետո կապիտալիստներին և կալվածատերերին ու հաստատեցին իրանց իշխանությունը, խորհուրդների իշխանությունը: Խորհուրդները կալվածատերերից խլեցին հողը, կապիտալիստներից ֆարքիկաներն, գործարաններն ու յերկաթուղին: Այդ բոլորը դարձան ընդհանուր պետական:

Ա դ հեղափոխությունը բանվորներն ու գյուղացիները կատարեցին Կոմունիստական Կուսակցության ղեկավարությունը, վորի առաջնորդը Լենինն եր: Խորհուրդները Լենինին ընտրեցին ժողովուրդի առաջին նախագահը: Այդպես ծագեց ամբողջ աշխարհում միակ բանվորական պետությունը. դա 1917 թվի հոկտեմբերին եր:

Մեզ մոտ Ադրբեջանում, կալվածատերերը, բեգերը, խաներն ու կապիտալիստները, հոկտեմբերից հետո, դարձյալ աշխատեցին իշխանությունն իրենց ձեռքը գցել. սպանեցին Բաբկի 26 կոմիսսարներին և վերականգնեցին իրենց մուսավաթիստական իշխանությունը, բայց բանվոր դասակարգը վիրտին միացրեց ու կազմակերպեց իր ուժերը և վերջնականապես հաստատեց իր իշխանությունը սրանից 11 տարի առաջ:

#### V. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մեր գյուղում, ռայոնում, շրջանում ու ամբողջ յերկրում աշխատանքը ղեկավարում են խորհուրդները: Նրանք հոգում են կոլխոզի, սովխոզի, ֆարքիկայի և գործարանի աշխատանքի մասին, մեքենաների ու տրակտորների մասին, գյուղական տնտեսությունը պարտացման, վառելիքի, ֆարքիկ-գործարանների հումույթի, բանվորական մատակարարման, հաղորդակցության ճանապարհների, դպրոցների, խրճիթ-ընթերցարանների, ակումբների, մանկապարտեզների, ամբողջ ժողովրդին գրագիտ դարձնելու, հիվանդանոցներին, վորբերին ու հաշմանդամներին ոգնություն հասցնելու մասին: Խորհուրդները պաշտպանում են բանվորին և աշխատավոր գյուղացիությունը՝ կապիտալիստների հարձակումներից:

Խորհուրդները—դա այն իշխանությունն ե, վորին ընտրում են բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունն իրանք, իրանց իսկ միջավայրից: Միայն աշխատավորներն իրավունք ունեն ընտրելու խորհուրդներին մեջ, շահագործողները (կապիտալիստ, կալվածատեր, կուլակ, առևտրական) և նրանց ոգնականները զրկված են այդ իրավունքից: Խորհրդի անդամը պիտի շարունակ հաշվետու ղեկուցում անի իր աշխատանքների մասին, իրան ընտրողների առաջ: Յեթե նա վատ ե աշխատում, միշտ կարելի ե նրան փոխել: Բոլոր գլխավոր հարցերը վճռում ե խորհրդի անդամների ընդհանուր ժողովը (դա կոչվում ե խորհրդի պլենում): Ավելի փոքր հարցերը վճռում ե խորհրդի նախագահությունը կամ նախագահը ինքը: Խորհրդի չուրաքանչյուր անդամին տրվում ե վորոշ աշխատանք՝ վորեւ կոմիսսիայում (կամ սեկցիայում), որինակ՝ տնտեսական, կուլտուրական և այլն:

Գյուղերն ու քաղաքները, նրանց խորհուրդները՝ կապված են իրար հետ իրանց աշխատանքով: Դրա համար ել նրանք միանում են ռայոնում: Ռայոնի խորհուրդների ներկայացուցիչները հավաքվում են խորհուրդների ռայոնական համագումարում և այնտեղ վճռում են բոլոր գլխավոր հարցերը, վորոնք վերաբերում են ընդհանուր ռայոնին. իսկ մշտական աշխատանքի համար ընտրում են ռայոնական գործադիր կոմիտե:

Այդ ձևով ել կառուցված ե խորհուրդների իշխանությունը մեր բոլոր հանրապետություններում և ամբողջ Միություն մեջ:

Խորհրդային իշխանությունը—դա մեր յերկրում ապրող բոլոր ազգությունների բանվորների և աշխատավոր գյուղացիության յեղբայրական միությունն ե: Բոլոր խորհուրդների մեջ (գյուղից մինչև ամբողջ Միությունը) մասնակցում են մեր յերկրի բոլոր ժողովուրդների աշխատավորության ընտրական ներկայացուցիչները: Յուրա-



քանչևուր խորհուրդ իր աշխատանքները տանում և այն լեզվով, ինչ լեզվով վոր խոսում և տեղական բնակչութիւնը: Առաջ մեր յերկրի տերեր եին հանդիսանում մի բուռ կալվածատերեր և կապիտալիստներ, վորոնք ճնշում ու շահագործում եին բանվորներին, չքավորներին, միջակներին (բնակչութիւն ճնշող մեծամասնութիւնը): Բանվորները, վոր անագին քանակութեամբ ապրում եին ֆարքիկաներում և գործարաններում, իրենք չունեին վորևէ սեփականութիւն: Տեսաք, թե ինչպես կապիտալիստների ամբողջ կարողութիւնը ու հարստութիւնը ստեղծվում և բանվորի աշխատանքով: Բանվորներն առաջինն եին, վոր սկսեցին կովել կապիտալիստների դեմ.—հավաքեցին ու կազմակերպեցին իրանց ուժերը այդ կովի համար, ստեղծեցին կոմունիստական կուսակցութիւնը, վոր դեկավարել և դեկավարում և նրանց աշխատանքներն. իրենց հետևից տարան չքավորներին և միջակներին:

Նրանք խորտակեցին շահագործողներին և հաստատեցին բանվորական պետութիւն: Կուլակը շահագործող և, ուստի և թշնամի և բանվորական պետութիւն: Չքավորներն ու կոլխոզնիկները խորհրդային իշխանութիւն նեցուկն են, միջակները բանվոր դասակարգի զաշնակիցն են: Բանվորներն ու աշխատավոր գյուղացիութիւնը դիտեն, վոր կոմունիստները կովում են ընդհանուր գործի համար. պաշտպանում են բանվորների ու աշխատավոր գյուղացիութիւն շահերը, կազմակերպում են նրանց՝ շահագործողների դեմ պայքարելու համար, տանում են նրանց դեպի նոր լուսավոր կյանք, ստեղծելու համար մի հասարակութիւն, վորտեղ շահագործում չկա վոչ մի վարդու կողմից. դրա համար ել խորհուրդներին դեկավարողներ ընտրվում են կոմունիստներից:

## VI. ՄԱՍՆԱԿՅԵՆՔ ԿՈՒԼՏԱՐՇԱՎԻՆ

1. Կոլխոզների, սովխոզների, ֆարքիկաների ու գործարանների աշխատանքները լավ դնելու, նոր բարդ մեքենաների հետ վարվել կարողանալու համար, բանվորին և գյուղացուն անհրաժեշտ և գիտութիւն: Խորհրդային իշխանութիւնը պայքարում և բոլոր աշխատավորների կուլտուրայի, ընդհանուր գրագիտութիւն, լավ դպրոցի համար, գրքի ու լրագրի և այլն համար: Ի՞նչու համար ցարը, կապիտալիստները, կալվածատերերը ու չեկեղեցին աշխատավորներին պահում եին խավարի մեջ: Շատ դպրոցներ բանվորներին և աշխատավոր գյուղացիութիւնը կամ բոլորովին չեին ընդունում և կամ շատ մեծ ուսման վարձ եին պահանջում: Լեհինն ի՞նչ և ասել մասսայական լուսավորութիւն համար: Մեր գյուղում և կոլխոզում ինչպես և դրված կուլտուրական աշխատանքը հասակավորների և փոքրերի մեջ: Մենք ինչ մասնակցութիւն պիտի ունենանք այդ աշխատանքի մեջ:

2. Յերեխաների կուլտուրական աշխատանքի պլանի մեջ կարող են մտնել հետևյալ գործնական աշխատանքները —

- ա) Բաժանորդագրել հասակավորներին, պատանիներին և փոքրերին լրագրի ու ժուրնալի՝ տանելով համապատասխան կամպանիա:
- բ) Տարածել գրքեր:
- գ) Ոգնել կոլխոզի գրագրարանին.—գրքերը բրոշյուրով կա անելը, համարաթերթիկներ փակցնելը, կարտեր գրելը և այլն:
- դ) Փոստից տերերին հասցնել հասցեագրված նամակներ ու գրքեր և այլ աշխատանքներ փոստային անկյունում:
- յ) Մինչդպրոցական փոքրերի հետ ախումբային աշխատանք տանել:
- զ) Բոլոր անգրագետներին լրիվ լիկկայան ընդգրկելու համար ագիտացիա մէկը և այլն:

3. Հասակավորների և փոքրերի մեջ կուլտաշխատանք տանելու հարցի հետ կապված և յերեխաների դիտելիքներ և հասկացողութիւն ձեռք բերելը՝ կարմիր անկյան, ակմբի կամ խրճիթ-ընթերցարանի, գրագարանի և լիկկայանի, դպրոցի վերաբերմամբ:

Պետք և յերեխաներին վառ պատկերացում տալ այն պայքարի մասին, վոր աշխատարդները մղում են դյուղի և քաղաքի կուլտուրայի համար՝ կուսակցութիւն և խորհրդային իշխանութիւն դեկավարութիւնամբ.—ընդհանուր պարտադիր ուսում մտցնելը. պայքար համատարած գրագիտութիւն համար, պայքար, ուսումը կյանքի, տնտեսութիւն հետ կապելու համար, պայքար՝ տեխնիկային տիրապետելու համար:

Կապիտալիստների և կալվածատերերի իշխանութիւն մեջ կուլտուրան ու գիտութիւնն աշխատավորական լայն մասսաներին մատչելի չե: Նա դտնվում և շահագործողների ձեռքին և ոգնում և նրանց աշխատավորութիւնը ճնշելու համար: Կրոնը գիտութիւն և կուլտուրայի թշնամին և կուսակցութիւնն ու խոր ուրդները պայքարում են ամբողջ աշխատավորութիւն կուլտուրականացման համար: Ինչ բան և կուլտարշավը (նրա իդեան). յուրաքանչյուր գրագետ պիտի սովորեցնի անգրագետին. յուրաքանչյուր աշխատավոր պիտի պայքարի վոչ միայն իր դիտելիքներն ավելացնելու համար, այլ և նրա համար, վորպեսզի այն հաղորդվի նաև նրանց, վորոնք զուրկ են դրանից:

4. Շահագործողների կողմից կուլտուրան աշխատավորներին ճշնչելու համար ոգտագործվելը կարելի և ցույց տալ մասնավանդ ԽՍՀՄ-ի մյուս ժողովրդների որինակներով:

Այստեղ պետք և ցույց տալ, թե ինչպես ցարի և կապիտալիստների իշխանութիւնը քաջալերում եին Ագրիկանում խավարն ու անկուլտուրականութիւնը: Յարի ժամանակ նրանց մայրենի լեզվով



դպրոց գոյութիւնն չունենր. բոլորին ել ստիպում եին սովորել ուսու-  
 ական դպրոցներում. նույն իսկ այդպիսի դպրոցներ մյուս ժողովրդնե-  
 րի համար շատ սահմանափակ թվով գոյութիւնն ունեին: Շատ ժողո-  
 վուրդներ միայն խորհրդային իշխանութեան որով ստացան իրենց  
 այլուրեքներ: Խորհրդային իշխանութիւնը մեծ հոգս տանելով կուլտու-  
 րայի շատ արագ զարգացմանը ԽՍՀՄ-ի բոլոր ժողովրդներին մեջ, մը-  
 տահողոված է կուլտուրայեան հետ մնացած մյուս ազգութիւններին  
 բանվորներին և աշխատավոր գյուղացիութեանը հասցնել ուսու-  
 վորի և աշխատավոր գյուղացիութեան կուլտուրական վիճակին: Այստեղ  
 մի քիչ ավելի խորացրած ձևով—քան առաջին խմբակում է տրված—  
 պարզաբանել, թե ինչպէս ցարը, փակելով նաև հայկական դպրոցները,  
 ամեն կերպ ճնշում էր հայերին ևս և ստիպում, վոր ուսուսական գըպ-  
 րոցներ գնան և ուսուսական կրթութիւնն և դաստիարակութիւնն ստա-  
 նան:

5. Գրքի տպագրութիւնը կուլտուրայի ամենազլխավոր զենքե-  
 րից մեկն է: Պետք է պատմել յերեխաներին, թե ինչպէս են մարդիկ  
 գտել այլուրեքներ: Թե ինչպէս նրանք հազարավոր տարիներ միայն  
 ձեռքով են գրել (գրքեր և այլն), թե ինչպէս առաջին անգամ գտել  
 են տպագրական առաջին և ամենապարզ գործիքը. թե ինչպէս գրքի  
 տպագրութիւնը արագ թափով առաջ մղեց կուլտուրայի զարգացման  
 գործը: Պետք է յերեխաներին բացատրել, վոր տպագրական ֆաբրի-  
 կաներն (տպարանները) գտնվում եին կապիտալիստների ձեռքին:  
 Պատմել գաղտնի տպարանների մասին, վոր կազմակերպել ու սարքել  
 են հեղափոխականները:

Յուշց տալ յերեխաներին հայերեն մի ձեռագիր գիրք\*), ցույց  
 տալ հայերեն տառերի հին և նոր տեսակների նմուշները:

VII. ԼԵՆԻՆՅԱՆ ՈՐԵՐ

Լենինն իր ամբողջ կյանքը նվիրել է բանվորների ու աշխատա-  
 վոր գյուղացիութեան ազատագրութեան պայքարին՝ շագագործողների  
 դեմ: Լենինն առաջավոր բանվորներից կազմակերպեց կոմունիստական  
 կուսակցութիւնը: Լենինն ամեն տեղ և ամեն ժամանակ աշխատել է  
 կալեկտիվ կերպով կուսակցութեան և աշխատավոր մասսաների հետ:

Յերեխաներին պիտի ծանոթացնել Լենինի մասին հին կոմու-  
 նիստների, բանվորների ու աշխատավոր գյուղացիութեան բերանում  
 պահված հուշերին. ծանոթացնել այնպէս, վոր Լենինի կենդանի պատ-  
 կերն իր ամբողջ հասակով կանգնի յերեխաների առաջ, պատկերն հե-

\*) Պատմել, թե ինչպէս միայն հայ հարուստներն ու կալվածատերերը իրավունք  
 ունեին այդպիսի գրքեր ունենալու:

դափոխական առաջնորդի և աշխատավորութեան ուսուցչի, նրանց հա-  
 մար ամենամոտ մարդու և ընկերոջ պատկերը: Շատ լավ կլինի ոգտա-  
 գործել նույնպէս А. Кравченко-ի «Յերեխաներին՝ Լենինի մասին»  
 գրքուկը: Պետք է յերեխաներին պատմել Լենինի մահվան մասին,  
 աշխատավոր մասսայի ահալոր վշտի մասին, բազմահազար մասսանե-  
 րի նրա հուղարկավորութեան մասնակցելու և նաև այն մասին, թե  
 ինչպէս հուղարկավորող բանվորները Լենինի մահվան առթիվ մտան  
 կոմունիստական կուսակցութեան շարքերը:

VIII. ԻՆՁԻՑ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԿՈՒ-  
 ԽՈՁԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Կոլխոզի պայքարը բնութեան ուժերի դեմ նրանց ավերիչ վի-  
 ճակից ոգտակարի վերածելու համար, նրա պայքարը կոլխոզի թշնա-  
 միների՝ կուլակի դեմ, նրան վերջնականապէս հաղթահարելու համար,  
 հասկանալի չի լինի յերեխայի համար ինչպէս հարկն է, չեթե մենք  
 նրանց առաջ բաց չանենք և չլուսարանենք արտագրութեան միջոց-  
 ների տեխնիկական և սոցիալիստական հսկա նշանակութիւնը: Նրանց  
 մեջ (հող, անասուն, շինութիւն) ահազին մեծ դեր են խաղում գյու-  
 ղատնտեսական մեքենաներն ու գործիքները: Նրանք պետք է տես-  
 նեն, թե վորքան ավելորդ և մեծ ուժ պիտի գործադրել՝ հին հետա-  
 մնաց գործիքներով աշխատելիս (արոր, մաճ, խոփ և այլն):


Ի՛նչպէս գործիքներն ու մեքենաները պատրաստված են գլխավո-  
 րապէս յերկաթից: Յերեխաները գիտեն, վոր յերկաթը ստացվում է  
 հողի մեջ գտնվող հանքից: Պատմվում է յերեխաներին, թե ինչպէս է  
 ստացվում յերկաթը հանքից: Յուշց է տրվում հանքը:

Դպրոցում նախապատրաստելուց հետո յերեխաներն ուղարկվում  
 են տեղական դարբնոցը և զիտում, գծագրում ու գրի են առնում այն  
 բոլորն, ինչ վոր այնտեղ տեսնում են ու լսում դարբնից իր աշխա-  
 տանքի մասին: Նախորոք, զիտելիս, յերեխաները կազմում են մի  
 հարցարան, յերեխաներից շատերն արդեն դարբնի շուրջը անց ու  
 դարձ անելով գիտեն թե ինչի մասին պիտի հարցեր տան: Այստեղ  
 յերեխաների ուղադրութիւնը պիտի դարձնել ամուսին ջերմութեան և  
 փութների կազմութեան վրա:

Յերկրորդը, վոր յերեխաներն իրանք ել տեսնում են արդեն,  
 դա պիտի յերկաթը ջերմութեան ազդեցութեան տակ փափկելն է, մա-  
 նավանդ յերբ շիկացած է:

Յերեխաները դպրոցից տուն վերադառնալուց հետո փորձեր են  
 կատարում յերկաթալարերով—տաքացնում են լարը և ծեծում են սո-  
 վորական մուրճով՝ նրան տափակացնելու համար:

ԿՐՄԻՆ





Յերեխաների յերկրորդ եքսկուրսիան կատարվում է կոլխոզի ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայանը): Այստեղ նրանք ծանոթանում են աշխատանքի հետ և դպրոցում փորձում են կրկնել նույնը, այսինքն՝ սղոցով աշխատում են դպրոցի մասնուլի վրա: Շատ լավ կլինի, յեթե յերեխաները տեսնեն ու դիտեն, թե ինչպես է ատաղձագործն աշխատում:

Յերեխաները ծանոթանում են վոչ միայն յերկաթի և նրա հըսկայական նշանակութանը՝ մարդկային կյանքում, այլ և ուրիշ մետաղների հետ. պղինձ, արձիճ, ալյումինին, ցինկ, արույր, արծաթ, սնդիկ: Աշխատանքային անկյունում, վորի կազմակերպման և սարքավորման համար պետք է շատ աշխատանք թափել, գործի դնելով տեղական ակտիվը, բանվորներն ու կոլխոզիկները, պետք է աշխատանքն յետ: Յերեխաներն աշխատում են յերկաթալարով, թիթեղով, սովորում են արույրելու ձևերը, սարքում են զանազան մոդելներ: Մենք պետք է ամեն տեղ, ուր դպրոց գոյություն ունի, տարածենք և դնենք աշխատանքային սենյակներ, կահավորված գործիքներով և յերեխաների աշխատանքների համար պետք յեզող մատերիալներով: Յերեխաները շեֆություն են կազմակերպում գյուղատնտեսական գործիքների վրա.— կոլխոզային գտիչները, թափիչները, գութանները, փոցխերն ու տրակտորները պահանջում են մեծ խնամք: Յերեխաները հետևում են նրանց պահպանութայանը, խնամում են, նշանակում են փրկված կամ կոտորված տեղի մասին, անց են կացնում պարբերական ստուգում և զեկուցում այդ բոլորի մասին շեֆբրիգադին դպրոցում—կոլխոզի վարչութայն առաջ և գյուղխորհուրդում:

Այդ բանում պետք է խոսել կոլխոզի անդամների հետ, վորոնք կարող են մեծ ոգնություն ցույց տալ այդ մանկավարժական գործում յերեխաների արտադրական աշխատանքում:

**ՀԱՍՍԲԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Հավաքել մետաղի փշրանքները: Շեֆություն վերցնել կոլխոզի մեքենաների և գործիքների վրա: Տարածել տեխնիկայի վերաբերյալ գրքույկներ գյուղի բնակչութայն մեջ: Կոլխոզին պետք յեզող նամակները գրել, ուղղված ուսյոնական կոլխոզիկներին և գործարան՝ մեքենաների վերաբերյալ:

**IX. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ**

**ՊԱՇՏՊԱՆՆ Ե ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ**

Բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը, վերցնելով իշխանությունն իրենց ձեռքը, սկսեցին իրենց ամբողջ ուժերը գործադրել կապիտալիստների պատերազմից ավերված տնտեսությունը վերականգնելու համար: Բայց կապիտալիստներն ու կալվածատերերը վորոշել հին վերադարձնել իրենց թագավորությունը. այդ նպատակով նրանք դավադրություններ սարքեցին խորհրդային իշխանութայն դեմ՝ Մոսկվայում և Լենինգրադում, մահափորձ կատարեցին Լենինի դեմ և վերավորեցին: Սպանեցին մի շարք բոլշևիկներ՝ խորհրդային իշխանութայն դեմակարգի: Նրանք Ռուսաստանի զանազան ծայրամասերում կողմեցին բանակներ՝ կուլակներից, նախկին սպաներից, գեներալներից և պատերազմի մտան խորհուրդների հետ (Կոլչակ, Գեյնիկին, Վրանգել և ուրիշներ): Նրանց ոգնութայն յեկան ուրիշ յերկրների կապիտալիստներն ու կալվածատերերը.— գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկական, յապոնական, լեհական, չեխական, ֆինլանդական և ուրիշներ: Նրանք ոգնում էին սպիտակ բանակներին հրացանով, թնդանոթով, գործով, փողով և այլն: Խորհրդային իշխանությունը կազմակերպեց իր Կարմիր Բանակը բանվորներից ու աշխատավոր գյուղացիներից: Յեվ այդ բանակը—կիսաքաղց, կիսամերկ, վատ զինված—ջարդեց բոլոր սպիտակ բանակները: Այդպես երեսակ մեկ մոտ Ադրբեյջանում: Թուրքական ու անգլիական կապիտալիստներն ու կալվածատերերն ուղարկեցին իրանց գործը, սպաներն ու գեներալները կովիլու խորհրդային իշխանութայն դեմ: Անգլիացիները ձերբակալեցին, հետո ել գնդակահարեցին Բագդի 26 կոմիսարներին: Համարյա յերկու տարի անգլիացիները Ադրբեյջանի կապիտալիստների հետ միասին (մուսավաթիստների) իշխանությունը պահեցին իրենց ձեռքը, բանվորներին ու աշխատավոր գյուղացիութայնը ճնշեցին ու հարստահարեցին, մինչև վոր ոգնութայն հասավ Կարմիր Բանակը և զուրս քշելով մուսավաթիստներին, նորից հաստատեց խորհրդային իշխանությունը: Մյուս յերկրների բանվորները ոգնութայն յեկան խորհուրդներին նաև սպիտակ բանակայինների դեմ նըրանց մղած կովում,—նրանք գործադուլներ էին սարքում և խանգարում կապիտալիստներին զենք փոխադրելու սպիտակ բանակայինների համար:

Ամբողջ աշխարհի կապիտալիստներն այժմ պարաստվում են պատերազմի մեր դեմ: Նրանք չեն կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր մեր յերկրի տերերը վոչ թե կապիտալիստներն ու կալվածատերերն են, այլ բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը: Մեր յերկիրը պատերազմ չի ցանկանում «մեկ մի թիգ անգամ հող պետք չե, բայց մեր հողից ել մի վերոդ իսկ չենք զիջիլ ուրիշին» (Ստալին): Կարմիր Բանակը կկարողանա պաշտպանել մեր յերկիրը, Կարմիր Բանակում կարող են լինել միայն աշխատավորները. կուլակներն ու աշխատավորութայն մյուս թշամիները չեն կարող մտնել այնտեղ: Լինել կարմիր-բանակային՝ շատ մեծ փառք է ու մեծ պարտա-



կանուխուս: Բոլոր աշխատավորները պետք է հոգան Կարմիր Բանակի մասին և ոգնեն նրան ավելի և ավելի ամրապնդելու: Յեղեք պատանի ընկերներ ՈՍՈ-Ավիախիմին:

### X. ՄԱՐՏԻ 8-Ը

Առաջի տարվա նյութը՝ բանվորուհիներին և աշխատավոր պեղջկուհիներին վիճակի վերաբերմամբ այժմ կոլխոզներում՝ այստեղ լրացվում է:

Տալ վառ պատկերներով Ադրբեջանի, Դաղստանի, Թուրքեստանի կնոջ մինչևե ավտիստիզուսը գոյութուն ունեցող վիճակը, յերբ կինն համարվում էր տառացի վորպես տան իր, աշխատավոր անասուն, վորին կարելի էր ծախել ուրիշին, անպատիժ ծեծել ու շարժել և այլն: Պետք է պատմել ու պարզել, վոր առաջ ցարական, այժմ էլ բուրժուական շատ յերկրներում որենքով կինն համարվում է իր ամուսնու լիակատար ստորադրյալը: Հոգևորականութունը սովորեցնում է, վոր կինը մարդու ստրուկն է: Նա իրավունք չունի իր զեմքը ցույց տալ տղամարդուն (հայերի մեջ հարսնացու ժամանակ և հարս դառնալուց հետո մի վորոշ ժամանակ), Կրոնն ուզում է կնոջից պատրաստել վոչ թե ազատ աշխատավորուհի, այլ տնային ստրկուհի:

Պետք է յերեխաներին ծանոթացնել պարսիկ, թուրք, չինացի, հնդկացի և նեգր գեղջկուհիներին ու բանվորուհիներին վիճակի հետ այժմ:

Յերեխաները ստուգում են, թե ինչ է արված ընթացիկ տարվա մեջ՝ կնոջ դրութունը լավացնելու համար կոլխոզում (մայրության ու մանկության պաշտպանության, մինչ դպրոցական կրթության, կնոջ անգրագիտութունը վերացնելու, հասարակական սնունդ և լվացարան կազմակերպելու տեսակետից) և կազմում են իրենց գործնական աշխատանքների պլանը՝ մինչդպրոցական արշավին ոգնելու համար:

Յերեխաները ստուգում են, թե ինչ մասնակցութուն ունին կանայք կոլխոզում, գյուղխորհրդում: Յերեխաներին պատմվում է շինարարության մասին.—Փարբիկ-խոհանոցները քաղաքում, կնոջ աշխատանքի մասին Փարբիկաներում, գործարաններում այն տեսակետից, թե կինն էլ տղամարդուն հավասար իրավունքներով աշխատում է վորպես բժիշկ, ինժիներ և այլն:

### XI. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (ԲԱՄԲԱԿԻ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ՅԵՎ ԱՅԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՏՔՆԵՐԸ)

1. Մարդու ուտելիքները պիտի լինի բազմատեսակ.—հաց, միս, կաթնամթերքներ, կարտոֆիլ, բանջարեղեն, պտուղներ: Աշխատավորների կերակրանյութերի մեջ բանջարեղենն ու պտուղները պիտի բըռ-

նեն մեծ տեղ: Այդ իսկ նկատառումով խորհրդային իշխանությունը տվել է հատուկ առաջադրութուն.—կոտպերացիա, բանվորներ, սովխոզներ, կոլխոզներ և ամբողջ աշխատավորներ, ավելի լայն չափով ծավալեցեք բանջարեղենի և պտուղների մշակումն ու արտադրութունը: Այժմ գնում և զարնանացանի պատրաստությունը: Մեր կոլխոզը պիտի կատարի կուսակցության և խորհրդային իշխանության առաջադրութունը: Մենք պիտենքերի ղեկավարությամբ կոգնենք նրան այդ անելուն:

2. Պետք է իմանալ ցանձում են արդյոք մեր կամ մոտակա կոլխոզներում բամբակ. կան արդյոք զուտ բամբակային կոլխոզներ: Ինչո՞հ համար ավելի ձեռնտու են բամբակային կոլխոզները, քան միանձնյա բամբակային տնտեսությունները: Իմանանք մեր կոլխոզի բամբակի պլանը: Ո՞վ է բամբակացանի թշնամին: Մենք ի՞նչ կարող ենք անել բամբակացանի աշխատանքների մեջ.—սերմերը մաքրել, արխերը մաքրելուն ոգնել, բամբակադաշտը մաքրել մացառներից և ավելորդ ի տերից. կոլխոզիկներին ոգնել հերկի և ցանքսի ժամանակ. ցանիչները (саялки) խնամել:

Պետք է իմանալ՝ մեր ուսյոնում և կոլխոզում շատ են աճեցնում արդյոք բանջարեղեն և պտուղներ: Կոլխոզում հասարակական բանջարանոց կամ արդյոք, թե վոչ: Ինչո՞ւ մեծ հասարակական բանջարանոցն ավելի ոգտակար է և ձեռնտու, քան փոքրը: Ծանոթանանք բանջարաբուծության և այգեգործության դարգացման պլանի հետ և ապա կոլխոզի վարչության հետ պայմանագիր կնքենք մեր աշխատանքի մասին՝ այդ գծով: Մենք կարող ենք պատրաստել սածիլներ, խնամել բանջարանոցն ու այգին, պայքարել վնասատուների և մոլախատերի դեմ:

3. Գյուղատնտեսական ամբողջ աշխատանքը պիտի կատարել իր ժամանակին: Կազմեցեք աշխատանքի որացույց ու ինքներդ ել կանոնավոր կերպով հետևեցեք, վորպեսզի իմանաք, թե ի՞նչ աշխատանք պիտի կատարեք: Իրանով պիտի սովորել բնությունը (յեղանակի փոփոխությունները) և մարդու աշխատանքը դիտելը, նրանց փխադարձ կապի մեջ (թե ի՞նչ կապ կա նրանց մեջ)—ի՞նչպես է փոխվում յեղանակը, հալվում ձյունը, վարարում գետերն ու գետակները, բողբոջում ծառերը, յերևան գալիս միջատները, գալիս են թռչունները, թե ի՞նչպես անասունները թափում են մազերը: Իսկ ի՞նչ են անում մարդիկ այդ ժամանակ բանջարանոցում, այգում, դաշտում Բոլոր գիտողությունները գրելու, գծագրելու և նկարելու ենք առանձին ցուցաթերթի վրա: Այդ ցուցաթերթի միջոցով շատ պարզ կերևա, թե ի՞նչպես աստիճանաբար գալիս է գարունը: Պիտի կազմենք նաև մեր կյանքի որացույցը.—մեր խողերը, աշխատանքի դիտողությունները և այլն:



4. Շուտով թռչունները կսկսեն չվել մեզ մոտ: Մենք անցյալ տարվանից գիտենք արդեն, վոր կան թռչուններ, վորոնք բանջարանոցի և այգու ընկերներն են. նրանք վռնչաօնում են վնասատու միջատներին ու վորդերը: Պետք է լավ դիմավորել մեր փետրավոր ընկերներին.— պատրաստել ծիծեռնակների համար բնակար, սարչակների համար կայան և այլն: Հետևելու ենք, թե վոր թռչուններն են մեզ մոտ բնակալում, ի՞նչ են բերում այնտեղ, ի՞նչպես յերգում և այլն: Այա շատ հետաքրքրական է հետևել, թե ինչպես են նրանք ձու դրնում և ձագեր հանում: Պետք է պաշարել բները քանդելու դեմ:

5. Այժմ արդեն ժամանակն է այգու աշխատանքները սկսելու.— պետք է կտրել պտղատու ծառերի հին ճյուղերը. արկղիկներում հող պատրաստել և սկսել նրանց մեջ սածիլներ աճեցնելը: Այդ բոլոր աշխատանքները պիտի կատարենք բրիգադներով: Յուրաքանչյուր բրիգադի մոտ պիտի լինի իր պլանը և հաշվառական ցուցատախտակը:

Սոցիալիստական մրցումը կոգնի մեզ այդ աշխատանքները կատարել ավելի լավ, համբաշի, ուրախ: Մրցման կլծենք բրիգադը բրիգադի հետ՝ լավ աշխատանքի համար: Հասակավոր կոլխոզնիկներին ևս հրավիրենք սոցմրցման: Թեև մենք շատ տաք կերպով պիտի կաշենք բանջարանոցին և այգուն, բայց միաժամանակ չպիտի մոռանանք մեր հավերն ու սագերը: Պետք է մեր ուժերն այնպես բաժանենք բրիգադների, վոր թե մեկի է թե մյուսի համար բավականանա: Աշխատանքը, վոր դնում ենք մեր առաջ, դժվար է, դրա համար էլ պետք է հաճախ ամբողջ աշխատանքի և պայմանագրերի ստուգում կատարել և յետ մնացած բրիգադին կամ ճյուղին ոգնել:

6. Մենք արդեն գիտենք, վոր առանց գրքույկի, առանց հաշիվի վոչ մի աշխատանք չպիտի կատարել: Իսկ ի՞նչ պետք է իմանանք մենք, ի՞նչ պիտի սովորենք: Պետք է ծանոթանալ հողին.— ի՞նչից է բաղկացած նա (ավազ, կավ և այլն), ի՞նչպես պետք է նրան պատրաստել զանազան բույսերի համար. մարդն ի՞նչպես է լավացնում հողը (մշակելն ու պարարտացնելը), պետք է իմանալ, թե ի՞նչու համար են սարքում ջերմոցները և թե ի՞նչու այնտեղ պետք է լինում (ներքեից աղբի ջերմոցները, վերևից արևի ջերմոցները, վոր պահպանվում է ապակիներով): Ի՞նչ կազմութուն ունին զանազան բույսերի սերմերը, ի՞նչպես ստուգել նրանց բեղունութունը: Ի՞նչ է պետք, վորպեսզի նրանք աճեն: Հետևենք, թե ի՞նչպես է ուռչում սերմը. ի՞նչպես է սկսում աճել արմատիկը և ի՞նչպես տերևներ արձակում, ի՞նչպես է յերևան գալիս ցողունը: Պետք է սովորել բանջարաբուծական և այգեգործական գրքույկներից ոգտվել:

7. Արկղիկներում աճող սածիլներին պիտի հետևել ամեն ժամանակ, վորպեսզի նրանք ցրտահար չլինեն, չը չորանան: Գիշերը պետք է

արկղիկը ծածկել ծղոտներով: Չանցկացնել սածիլները տեղափոխելու և նոսրացնելու ժամանակը: Յե՛ր և ինչպես պիտի տեղափոխել բույսերը, Արմատ և նրա մազմզուկները: Արմատի միջոցով բույսն հողից սնունդ է ստանում. վորքան շատ լինեն մազմզուկները, այնքան ավելի շատ սնունդ է ստանում բույսն արմատի միջոցով: Տեղափոխության և նոսրացման միջոցով մենք ավելացնում ենք ճյուղերի և արմատամաղերի քանակը:

8. Հետաքրքրական է համեմատել իր այգին ու բանջարանոցը ուրիշ կոլխոզի այգու և բանջարանոցի հետ: Յեթ մոտերքը կա այնպիսի կոլխոզ, վոր ունի ջերմոց, այգի և բանջարանոց, կատարել այնտեղ եքսկուրսիա: Ի՞նչ կարող ենք որինակել այնտեղից: Յեթե եքսկուրսիա գնալ չլինի, գոնե կարգանք գրքույկներ և նայենք նկարները՝ իմանալու համար թե ի՞նչպես են աշխատում որինակելի բանջարանոցում, այգում, կոլխոզում, սովխոզում և ի՞նչպես են աշխատում քաղաքի բանվորները:

9. Բանջարանոցն ու այգին մեր գլխավոր հոգածության առարկաներն են՝ գարնանացանի կամպանիայի մեջ: Բայց կունենանք ուրիշ աշխատանք էլ— ամբողջ դպրոցի համար ընդհանուր — այն է՝ վաղ գարնանը կոլխոզի կերպով պիտի պաշարենք այգու վնասատուների դեմ, կտղամբի վնասատուների դեմ՝ տնկարաններում և ջերմոցներում, պիտի վռնչաօնենք այնտեղ մոլախոտերը, հետևենք հարսնուկների ձվից զարգսնալուն, պիտի դիտենք նրանց կյանքը շարմազով ծածկված բաժակի մեջ, նրանց ազահությունը և այլն: Այդպես ենք իմանում վնասատուների կյանքը, վորպեսզի ավելի հաջող պաշարենք նրանց դեմ:

10. Յանքսի նախապատրաստության և գարնանամարային տաք աշխատանքների ժամանակ հանգեպ կրոնական տոների պետք է պաշարենք բոլոր տեսակի բացակայութունների դեմ.— դպրոցի յերեխաների հետ 100% -ով պիտի ապահովենք հաճախումը այդ սրերին: Պետք է պաշարենք ծնողների ու կոլխոզնիկների բացակայութունների դեմ, վորովհետև կրոնական տոներն ընդհատում են կոլխոզային ցանքս: Նրանք ձեռնտու են տերտերներին, մոլլաներին ու բոլոր նրանց, վորոնք թշնամի են կոլխոզին:

### ՄԱՅԻՍԻ 1-Ը

Այստեղ ևս, ինչպես «Մարտի 8-ը» թեմայում պետք է լրացնել և խորացնել յերեխաներին առաջին տարվանից արդեն հայտնի մատերիալը, տալով վառ ու տղավորիչ պատկերներ ուրիշ յերկրների բանվորների ու աշխատավոր գյուղացիության դրության ու պաշարի մասին և այդ պատկերները պիտի վերցնել մի կողմից կապիտալիստա-



կան այն յերկրներէց, վորտեղ դասակարգային պայքարը շատ ավելի լարված վիճակ ե ներկայացնում ներկայումս և ստանում ե սրված ձևեր, մյուս կողմից՝ գաղութային և կիսագաղութային յերկրներէ կյանքից: Այսպէս՝ որինակ, այս տարվա համար շատ կ ընոր ե դասակարգային պայքարի այդպիսի պատկերներ վերցնել Գերմանիայից, Միացյալ-Նահանգներից, Լեհաստանից, Չինաստանից և Հնդկաստանից: Պետք ե պատմել յերեխաներին այդ յերկրների բանվորների ու աշխատավոր գյուղացիութեան յերեխաների վիճակի մասին, բուրժուական դպրոցի մասին, պիտներներէ պայքարի մասին: Պետք ե պատմել նրանց, վոր բոլոր յերկրներում ել գոյութուն ունին կոմունիստական կուսակցութիւններ, վոր ամբողջ աշխարհի կոմունիստները միանում են մի մարտական հզոր կազմակերպութեան մեջ—կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ:

Յերեխաների առաջ պիտի հարց դնել ԽՍՀՄ-ի բանվորների ու աշխատավոր գյուղացիութեան՝ ուրիշ յերկրներում գտնվող մեր յեղբայրներին ոգնելու պարտականութեան մասին, ոգնելու շահագործողների դեմնրանց մղած պայքարում և նրանց համար հասկանալի դարձնել պիտներական լողունգը—«Բանվորական գործի պայքարի համար՝ եղիր պատրաստ».—«Միշտ պատրաստ եմ»:

## XII. ԳԱՐՆԱՆԱ-ԱՄԱՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ—ԲԱՆՋԱՐԱՆՈՑՈՒՄ, ԱՅԳՈՒՄ, ԹՈՉՆԱՐԱՆՈՒՄ, ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲԱԿՈՒՄ

Գարնանը և ամրանը II խմբի յերեխաների գյուղատնտեսական աշխատանքը կենտրոնանում ե գլխավորապես բանջարանոցում, պտղաբանում և այլն: Աշխատանքի հետ միաժամանակ պիտի հարստացնենք մեր գիտելիքները՝ գյուղատնտեսական աշխատանքի, բնութեան և պլանի մասին:

Բացի գյուղատնտեսական աշխատանքներից ամրանը շատ ավելի հարմար ե կատարել եքսկուրսիաներ բնութեան մեջ, ուրիշ կոլխոզներ: Կազմակերպել հեռավոր և մոտավոր արշավներ: Հինց ամրանն ել պիտի կաղզուրել առողջութունը, վորպեսզի ամբողջ ուսումնական տարվա համար ույժ հավաքենք: Իսկ ինչպես կատարել այդ բոլորը: Ամենից լավն այսպես ե.

1. Յուրաքանչյուր բրիգադ վերցնում ե յերկու գործ, մեկը բանջարանոցում կամ այգում, մյուսը անասունների բակում կամ թոչնաբանում:

2. Յուրաքանչյուր բրիգադ պիտի ունենա պլան և հաշվառման ցուցատախտակ:

3. Պլանում պետք ե գրված լինի, թե ինչ աշխատանք վոր ամսում պիտի կատարել, ինչ փորձեր պիտի կատարել:

4. Յուրաքանչյուր բրիգադի ամրացնել մի մի աշակերտ՝ IV խմբից կամ գուլգուլխոզաբուցից (IIIKM):

5. Ամբողջ յերկրորդ խմբին ամրացնել մի քանի կոլխոզնիկներ և կոմսոմոլների, վորպես կուլտրանակայիններ, վորոնք աշխատում են թոչնանոցում, անասնական բակում, բանջարանոցում, այգում, վորպեսզի ոգնեն աշխատանքում:

6. Ամբողջ ամառվա համար ընտրել ստուգող կոմիտեա, վոր մըտապես պիտի հետևի աշխատանքի ընթացքին, թե ինչպես ե գնում:

7. Ամեն ամիս կազմել բոլոր բրիգադների ընդհանուր հավաք, ստուգելու համար աշխատանքներն ու պայմանագրերը:

8. Հնգորյակում յերկու անգամ հավաքվել դպրոց տեսական դաղմունքի համար:

9. Զանալու յենք աշխատել կազմակերպված ու կանոնավոր.— քնել բացողյա, արևի վաննա ընդունել, լողանալ համաձայն կանոնների և այլն:

Իսկ ինչ աշխատանք պիտի կատարել գարնանը և ամրանը և ինչ սովորեն յերեխաները: Տալիս ենք որինակելի մի ցուցատախտակ (որացույց) ամարային աշխատանքների:

## Մ Ա Յ Ի Ս

### I. Բամբակ

1. Բամբակացանի ժամանակ աշակցել կոլխոզնիկներին (հասցնել նրանց լրագիր, ժուրնալ, ջուր և այլն):

2. Կարողաչափ ոգնել սերմ ու սերմնացան մատակարարելիս:

3. Հնարավոր պայմաններում մասնակցել բամբակի քաղհանին՝ կոմսոմոլխոտներ և ավագ պիտներների ղեղավորութեամբ:

Ի՞նչ դիտել, ի՞նչ սովորել յել ի՞նչ կարգալ.— Ի՞նչպիսի կլիմայական պայմաններ են պետք բամբակի համար (տաքութուն, ջուր և այլն): Արաթի ժամանակն ու նշանակութունը բամբակի համար: Դիտել դաշտն արաթից հետո. վնասված արաթ, հերկի խորութունը (ակոսների), հերկի նշանակութունը: Ինչո՞ւ համար են պարարտացնում հողը. դիտել թե ինչպես ե կատարվում պարարտացումը: Պարարտացման տեսակները (աղբ, քիմիական պարարտացում): Դիտել վոտոգման ցանցի պլանը. դիտել սերմնացանի աշխատանքը. դարձացանի նշանակութունը, սերմակետերի հեռավորութունն ու խորութունը. լավ և փչացած սերմի տեսակները: Դիտել կուլտիվատորի աշխատանքը՝ ձեռքով քաղհանը. քաղհանի նշանակութունը. բամբակացանի մեջ



տարածված մտախոտերը, բամբակի մեծ վնասատուները (մորեխ և այլն), վնասատուները դեմ սրայքարելու պարզ ձևերն ու միջոցները:

### II. Բանջարանց

1. Հողամասի պլանավորումը:
2. Ածուների բաժանելը:
3. Ծանծաղ սերմվող բանջարեղենների ցանելը, ջրելը և հավերից պաշտպանելը
4. Սածիլները հողի մեջ տեղափոխելը և նրանց հետևելն ու խնամելը:

Ի՞նչ դիտել, ի՞նչ սովորել, ի՞նչի մասին կարդալ:—Ի՞նչպիսի հող և պետք տարբեր բույսերի համար, ի՞նչպես պարարտացնել նրան և մշակել: Ի՞նչ համար են բաց անում ածուներ և ի՞նչ լայնության ու բարձրության պիտի լինեն նրանք: Ի՞նչպես են մշակում բանջարանոցը մի անձնյա տնտեսությունները և ի՞նչպես կոլխոզնիկները: Սովորել հողի (գետնի) վրայից ուղիղ գիծ անցկացնելը և չափել ածուի լայնությունն ու չերկարությունը: Ի՞նչ խուլությամբ պիտի ցանել զանազան սերմեր և ի՞նչ հեռավորությամբ պիտի լինեն շարքերը: Յե՞րբ կարելի է սածիլները տեղափոխել և ի՞նչպես անել այդ:

Ի՞նչ վոր սովորեցիք ու իմացաք՝ գրեցեք ձեր տետրերում: Հենց այնտեղ ել նշանակեցեք, թե յե՞րբ (ամսաթիվը և այլն) ի՞նչ է ցանված և տնկված: Գծագրեցեք, թե զանազան բանջարեղեններ ի՞նչպես են աճում: Ձմռանաք բնության և գյուղատնտեսական աշխատանքի որացույց վարելը: Կատարեցեք աշխատանքի հաշվառում: Գծագրեցեք բանջարանոցի պլանը և նրա վրա նշանակեցեք, թե վիճրտեղ ի՞նչ է ցանված վիճրտեղ ինչ բրիզադ է աշխատում:

### III. Հասապսղանց (Ягодный сад)

1. Մորենու կապելը (подвязка):
2. Հաղարջենու բազմացումը:
3. Յնկաների հողը մաքրելն ու փափկացնելը, նոր աունկեր դնելը:
4. Պիտանի մացառների հողը փափկացնելը, պարարտացնելը:
5. Սկսել պալքարել վնասատուների դեմ:

Ի՞նչ դիտել, ի՞նչ սովորել, ի՞նչ կարդալ.—Ի՞նչ աշխատանքներ և ի՞նչպես պիտի կատարել այդո՞ւմ մայիսին՝ կազմեցեք փոքրիկ հիշատակարան:

Կազմեցեք այդու վնասատուների հավաքածու: Կազմեցեք այդու պլանը և այնտեղ նշանակեցեք, թե վիճրտեղ ի՞նչ է տնկված և վիճրտեղ

ինչ բրիզադ է աշխատում: Ի՞նչպես են աշխատում կոլխոզնիկները որինակելի այգիներում: Ճշտորեն կատարեցեք աշխատանքի հաշվառումը:

### IV. Թռչնանց

1. Պատրաստել ջրաման հավերի համար՝ շիշերից:
  2. Մաքուր պահել հավնոցը:
  3. Կերակրել ձուտերին և պաշտպանել թշնամիներից:
  5. Հաշվառում կատարել յուրաքանչյուր հավի կերի և ածած ձրվերի համար:
- Կրթական մտաբերիլը տես «Կատարենք պիտներների թռչնարուծական հնգամյակը» թեման:

### V. Ճագարանց

1. Հավաքել մագերը ճագարների հերթափոխության շրջանում:
  2. Արձակել խաղալու ճագարներին և խոճկորներին:
  2. Մաքուր պահել նրանց տնակն և ուտելու ամանները:
  4. Կերակրել նորմայով:
- Կրթական մասերիլը.—Ինչպես կերակրել ճագարներին ու խոճկորներին գարնանը և ամրանը, կազմեցեք այդ մասին հիշատակարան: Կատարեցեք հաշվառում կերի: Կարդացեք խոճկորների ու ճագարների հիվանդությունների մասին: Ծանոթացեք մեծ կոլխոզների ու սովխոզների անասնարուծական աշխատանքների հետ: Կատարեցեք աշխատանքի ճշգրիտ հաշվառում:

### VI. Ծառասնկության որը

Մայիսին ամբողջ դպրոցը պիտի անց կացնի «Ծառասնկության որ»- լերկրող խմբակն ել պիտի մասնակցի նրան:

1. Գրել պատի թերթում անտառի նշանակության և տեղական անտառային տնտեսության անկանոնության մասին:
2. Կազմել հավաքածուներ տեղական անտառային տեսակների, սերմերի և վնասատուներից նմուշներից՝ ցուցադրանդիսի համար:
3. Պատրաստվել լերկրողներում լերկրողներ ունենալու համար:

4. Մասնակցել ջերմոցի դրմանը և մատղաշ ծառեր տնկելուն: Կրթական մասերիլը.—Անտառի մասին մանրամասն հարցարան մշակվելու է յերրորդ խմբում: Յերկրող խմբում կարելի է բավականանալ անտառի ոգտի և նրան պահպանելու (կտրտելուց և հրդեհից) կանոնների վերաբերյալ ամենահակերձ տեղեկություններ տալով, նաև այն մասին, թե մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը զ՛ւմ էին պատկանում անտառները և ո՞ւմ այժմ:



### VII. ԵՖԿԼՈՒՐՍԻԱ

Մայիսին, յերբ գետինը չորացած և լինում, պեաք և կազմակերպել հքսկուրսիա դեպի անտառ (ծառատնկության որվա նահորյակին — կոլեկցիայի, հավաքածոյի համար նյութեր հավաքելը) և դաշտ, տրակտորները և մեքենաները աշխատանքները դիտելու և տեսնելու համար: Գրի արեք և նկարագրեցեք, թե ի՞նչ սովրեցիք և տեսաք հքսկուրսիայի ժամանակ: Մշակեցեք ձեռք բերված մատերիալը պատի լրագրի ու ցուցանանդիսի համար:

### Հ Ո Ի Ն Ի Ս

#### I. Բամբակ

Շարունակել մայիս ամսում սկսված դիտողությունները և մասնակցել կարողաչափ բամբակի քաղհանին՝ կոմսոմոլիստների և ավագ պիոներների ղեկավարությամբ:

#### II. Բանջարանոցը

1. Զրել ածուները:
2. Փափկացնել հողի վերի շերտը:
3. Քաղհանել մոլախոտերը:
4. Կտրել ստեպլին (марковь) ու շաղգամը:
5. Շաղգամի ուշ ցանքսը:
6. Պայքար վնասատուների դեմ:
7. Հեղուկ պարարտանյութով ջրել:
8. Միսեռի համար նեցափայտեր դնելը:

Կրքական մատերիալ.— Բանջարանոցի ամարային խնամքի կանոնները: Կազմեցեք հիշատակարան: Կազմեցեք մոլախոտերի և վնասատուների հավաքածո: Ինչո՞ւ համար դժվար է մոլախոտերի դեմ կռվելը: Մոլախոտերի բազմացումը արմատից: Ածուներից մեկում փորձ կատարեցեք.— մի մասը քաղհանեցեք, մյուսը վոչ, մի հողի մի մասը փափկացրեք, մյուս մասը վոչ: Շարունակեցեք բանջարանոցային բույսերի զարգացման վերաբերյալ ձեր դիտողությունների գրանցումն ու նկարելը: Արմատ, տերև, ցողուն, ծաղիկ և նրանց փոշոտվելը միջատների միջոցով: Դիտեցեք բանջարանոց այցելող (թռչող) թռչունները: Ոգտակար անասունները.— վոզնի, գորտ, գորտի զարգացումը:

#### III. Ա յ գ ի ն

1. Հատապտղարանի բրելը և փափկեցնելը:
2. Հեղուկ պարարտանյութով ջրելը:

- 3.— Զրել յելակներն:
- 4.— Պուզել յելակների և ընտանի յելակների բեղերը:
- 5.— Կռվել վնասատուների դեմ:

Կրքական մատերիալ.— Ինչպե՞ս են բաղմանում յելակն ու ընտանի յելակն: Ինչո՞ւ պեաք և բեղերը կտրել: Կազմեցեք այդ վնասատուների հավաքածոն: Գրի առեք և նկարեցեք: Կազմեցեք այդու մոլախոտերի հավաքածոն: Դիտեցեք այդին յեկող թռչունները:

### IV. ԹՈՆՎԱՆՈՑՆ ԵՒ ԱՎԱՐԱՆՈՑՐ

1. Բաժանեցեք իրանց մորից ծծից կտրած ճագարներին:
2. Պատրաստել նրանց համար առանձին տնակ՝ մեծերի ողնությամբ:
3. Շարունակեցեք, ինչպես մայիսին, հավերի, ճագարների, խոճկորների խնամքը:
4. Շարունակել դիտողությունները, գրանցումները, նկարելը, կերի, ձու ածելու հաշվառումն և այլն:

### V. Մասնակցել ամբողջ դպրոցի հետ „Տրակտորի ու-ն“ անցկացնելուն

### VI. Կազմակերպել ռազմական խաղեր ու վարժություններ ավագ պիոներների դ՛ կավարությամբ

### VII. Կազմակերպել Եֆկուրսիա-գրոսանֆ հարեվան կոլխոզը, կոմսոման, սովխոզը

### ՀՈՒԼԻՍ ՅԵՎ ՈԳՈՍՏՈՍ

#### I. Բամբակ

Նույն դիտողությունները, ինչ վոր արված է մայիսի համար: Դիտել բամբակի ծաղիկն ու բամբակի կնգուղը: Գրի առնել և նկարել ինչ վոր դիտել և տեսել եք ու սովորել:

#### II. Բանջարանոցը

1. Շարունակել բանջարանոցի խնամքն, ինչպես հունիսին:
2. Կազմել բույսերը պահել սերմացուի համար:
3. Հավաքել սերմեր:
4. Վաղ հասունացած բանջարեղենների բերքն հավաքել:
5. Շարունակել նախորդ դիտողություններն ու գրանցումները: Հաշվառում կատարել բերքի և սպառված աշխատանքի:



### III. Ա. յ գ ի ն

1. Յելակի և ընտանի յելակի բազմացումը բեղերով:
2. Մորենու ամառային կանաչ ճյուղերի կտրելը:
3. Պաղիքը հավաքելը:
4. Մորենու հին ճյուղերը կտրելը:
5. Շարունակեցեք նույն գրանցումներն ու դիտողությունները, ինչ վոր առաջ սկսված ե: Կատարեցեք ճիշտ հաշվառում բերքի ու աշխատանքի:

### IV. Թռչնանոց, նագարանոց, խոզանոց

Շարունակել նույն աշխատանքներն, ինչ վոր հունիսին: Շարունակեցեք նախորդ գրանցումները, նկարելը, դիտողություններն ու հաշվառումը: Մշակեցեք թվեր՝ յուրաքանչյուր ամսվա համար:

### V. Ոգնենք հասակավորներին՝ խոսհարի յեվ հունձի ժամանակ

### VI. Մասնակցել „Մանամադրության յեվ յերկրի պաշտպանության ուր“-ն անցկացնելուն (հուլիսի 6-ը)

1. Իմանալ, թե ինչու համար ե դրվում «Մանամադրության և յերկրի պաշտպանության ուր»-ը: Կարդացեք և նայեցեք նկարներ, թե ինչպես են ապրում մեր յերկրի, ԽՍՀՄ-ի, զանազան ժողովրդների յերեխաները:
2. Պատրաստել դրոշակներ ցույցի համար և փոքրիկ լապտերներ՝ լուսավառության համար:
3. Սովորել ռազմական նոր յերգեր ու մասնակցել ցույցի:





